Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկով նախատեսված և 2019 թվականին ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից իրականացված միջոցառումների մասին

Կետ 21.1 - *Առողջ ապրելակերպի,այդ թվում՝ ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի վնասակար ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկման արշավի իրականացում (հեռուստատես թյամբ՝ հաղորդումներով, սոցիալական տեսահոլովակներով, ռադիոհաղորդաշարերի,տպագիր մամուլի եւ ցուցապաստառների միջոցով):*

ՀՀ Շիրակի մարզի առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններին տրամադրվել է ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. դեկտեմբերի 19-ի թիվ 3286–Ա հրամանով հաստատված «Ծխախոտային կախվածությունից բուժման և խորհրդատվության ուղեցույց»-ը՝ ազգաբնակչության շրջանում քարոզչական աշխատանքներ իրականացնելու նպատակով: «Ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրի շրջանակներում» ՀՀ առողջապահության նախարարի 2019թ. նոյեմբերի 7-ի «Մարզերի և Երևան քաղաքի բժշկական հաստատություններին հատկացվող պաստառների բաշխացուցակը հաստատելու մասին» թիվ 3260-Լ հրամանով ՀՀ մարզի բժշկական կազմակերպություններին են տրամադրվել *ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի վնասակար ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկման* հակածխախոտային պաստառներ:

Կետ 23.1 - *«Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:*

«Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Կետ 23.2 - *«Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:*

«Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող 2019-2023 թվականների միջոցառումների

ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ կարծիք է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Կետ 23.3 *-Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանի հաստատում:*

ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի օգոստոսի 26 -ի թիվ 2341-Լ հրամանով հաստատվել է «Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիր»-ը, ինչի արդյունքում իրականացվել է բնակչության և բուժաշխատողների իրազեկում սիրտ-անոթային հիվանդությունների ռիսկի գործոնների կարևորության մասին (սննդի աղ, ծխախոտ, ֆիզիկական ծանրաբեռնվածություն և այլն), ՀՀ Շիրակի մարզի բնակչության ռիսկի խմբերում իրականացվել են սիրտ անոթային հիվանդությունների զանգվածային սքրինինգներ, իրականացվել է «Սրտի շաբաթ» միջոցառում՝ նվիրված սրտի համաշխարհային օրվան:

Կետ 24.1 - *«Բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման տեսլականը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:*

«Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման տեսլականը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ կարծիք է ներկայացել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Կետ 24.2 - *«ՀՀ առողջապահական համակարգի հնգամյա զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:*

«Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգի հնգամյա (2020-2025 թվականներ) զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ կարծիք է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Կետ 77.1 - *Արտակարգ իրավիճակներում բնակչության վարքականոնների վերաբերյալ դասընթացների, վարժանքների ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում:*

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2019 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների մասին», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերի կանխարգելման մասին» ՀՀ Շիրակի մարզպետի որոշումների և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի անտառներում հակահրդեհային պահպանության ապահովման միջոցառումների» պլանի՝ մարզի տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպություններն ու բնակչությունը ներգրավվել են արտակարգ իրավիճակների կանխարգելման և դրանց հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին:

ՀՀ Շիրակի մարզպետի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 21-Ա որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանի» համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի թվով 10 համայնքներում և 7 միավորված համայնքների 20 բնակավայրերում անցկացվել են «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը երկրաշարժի դեպքում», «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը սելավների սպառնալիքի դեպքում», «Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում տարահանման կազմակերպում» թեմաներով շտաբային ուսումնավարժություններ: Մի շարք ուսումնական հաստատություններում անցկացվել են «Պատսպարման կազմակերպումը «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում», «ԱԻՆ գործառույթները և խնդիրները բնակչության պաշտպանության բնագավառում» թեմաներով հատուկ տակտիկական ուսումնավարժություններ, քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվա, ՀՀ ԱԻՆ աշխատակցի օրվա ու երկրաշարժի զոհերի հիշատակի և աղետներին դիմակայունության օրվա կապակցությամբ հանրակրթական ու նախադպրոցական ուսումնական հաստատություններում կազմակերպվել և անցկացվել են դասախոսություններ և վարժանքներ: Իրականացվել են նաև պլանով նախատեսված այլ միջոցառումներ:

Անտառային և բուսածածկ տարածքներում հրդեհների առաջացման, տարածման վտանգի կանխարգելման և դրանց հետևանքների վերացման մասին բնակչության շրջանում իրազեկվածության բարձրացման նպատակով, մարզի բոլոր համայնքներին ուղարկվել է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից ներկայացված կանխարգելիչ և հրդեհային անվտանգության կանոնների վերաբերյալ տեղեկատվական թերթիկը:

Հաստատված պլան-ժամանակացույցին համապատասխան, ՀՀ Շիրակի մարզի թվով 100 ղեկավար աշխատողներ և մասնագետներ մասնակցել են ՀՀ արտակարգ

իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2019 թվականի ընթացքում կազմակերպված համապատասխան դասընթացներին:

Կետ 80.1 - *Համայնքներին սպառնացող վտանգների դասակարգում ըստ առաջնայնության՝ վտանգների, խոցելիության և կարողությունների վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա:*

Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2019 թվականին իրականացվել են ՀՀ Շիրակի մարզի Գետափ և Նահապետավան համայնքներին սպառնացող վտանգների դասակարգման (ըստ առաջնայնության՝ վտանգների, խոցելիության և կարողությունների վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա) և համայնքների զարգացման հնգամյա ծրագրերի վերլուծական աշխատանքներ: Կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունները և վտանգների, խոցելիության ու կարողությունների հաշվետվությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին: Միաժամանակ, նշված համայնքների ղեկավարներին առաջարկվել է քննարկել համայնքների զարգացման հնգամյա ծրագրերում աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումներ ներառելու հնարավորությունը, որի արդյունքում համայնքների 2020 թվականի բյուջեներում նախատեսվել են աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներին ուղղված ֆինանսական միջոցներ:

Կետ 80.2 - *Համայնքներում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների դասակարգում՝ համայնքի բյուջետային միջոցներին համապատասխան:*

ՀՀ Շիրակի մարզի բոլոր 42 համայնքների ղեկավարների կողմից հաստատվել են ՀՀ Շիրակի մարզպետի և ՀՀ ԱԻՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի հետ համաձայնեցված համայնքային աղետների ռիսկի կառավարման պլանները, որոնցում ընդգրկված են աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումներ:

Կետ 104.1 - *Գյուղատնտեսական նշանակության չօգտագործվող հողերը շրջանառության մեջ ներառելու ուղիների մշակում, մասնավորապես չօգտագործվող հողերը շրջանառության մեջ դնելու վերաբերյալ իրավական ակտի նախագծի մշակում և ընդունում.*

2019 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացվել է առաջարկություն գյուղատնտեսական նշանակության չօգտագործվող հողերը շրջանառության մեջ ներառելու ուղիների վերաբերյալ:

Կետ 105.1 - *Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրի իրականացում.*

Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրից ՀՀ Շիրակի մարզից օգտվողներ չեն եղել:

Կետ 105.2-*Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագրի իրականացում.*

Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագրից ՀՀ Շիրակի մարզից օգտվողներ չեն եղել:

Կետ 105.3 - *Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման ծրագրի իրականացում.*

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման ծրագրից ՀՀ Շիրակի մարզից օգտվողներ չեն եղել:

Կետ 105.4 - *Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագրի իրականացում.*

2019 թվականին ագրոքիմիական հետազոտությունների ծրագրի շրջանակներում քարտեզագրման աշխատանքներ են կատարվել ՀՀ Շիրակի մարզի Բագրավան, Գուսանագյուղ, Սարալանջ, Լեռնակերտ, Մեծ Մանթաշ, Վարդաքար, Պեմզաշեն, Բյուրակն, Գտաշեն, Հողմիկ, Ջրաձոր, Գոգհովիտ, Կարմրավան, Կրասար, Ղազանչի, Սարագյուղ համայնքներում և բնակավայրերում, սակայն ծրագիրը անավարտ է մնացել Այգաբաց, Կամո, Ջրառատ, Հովիտ բնակավայրերում:

Կետ 105.5 - *Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացում.*

Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրից ՀՀ Շիրակի մարզից օգտվողներ չեն եղել:

Կետ 106.1 - *Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի իրականացում.*

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրից 2019 թվականին օգտվել են 32 շահառու, տրամադրված վարկերի կամ փոխհատուցման գումարը կազմել է 255 672 000 դրամ, տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է 13 357 738

դրամ: Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 40 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից 24-ը տրակտոր:

Կետ 107.1 - *Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացում.*

Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագիր ՀՀ Շիրակի մարզում չի իրականացվել:

Կետ 107.2 - *Գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկայի ստեղծման ներդրումային ծրագրի մշակման նպատակով հանրապետության մարզերի տարածաշրջաններում հետբերքահավաքային կարիքների (իրացման և մթերման կետեր, պահեստարաններ, սառնարանային տնտեսություն և այլն) և մթերման կետերի ստեղծման համար անհրաժեշտ հողատարածքների և շինությունների գնահատում.*

2019 թվականին մարզի Ղարիբջանյան համայնքում հիմնվել և գործում է շուրջ 4000 տոննա արտադրական հզորությամբ գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկա: Գնահատվել և ուսումնասիրվել է Բենիամին համայնքի վարչական տարածքում մարզային գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկա հիմնելը:
2019 թվականին Ախուրյան համայնքում տրամադրվել է անհրաժեշտ հողատարածք սառնարանային տնտեսություն հիմնելու նպատակով:

Կետ 110.1 - *Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի իրականացում.*

Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրից 2019 թվականին օգտվել են 5 շահառու, տրամադրված վարկերի կամ փոխհատուցման գումարը կազմել է 166 931 225 դրամ, տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է 1 179 452 դրամ:

Կետ 111.1 - *«Հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային Հանրապետությունում սերմնաբուծական տնտեսությունների 2019թ. ՀՀ պետական բյուջե ության, ինտենսիվ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի իրականացում մշակաբույսերի սերմնաբուծության զարգացմանն աջակցություն» ծրագրի իրականացում.*

«Հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային Հանրապետությունում սերմնաբուծական տնտեսությունների 2019թ. ՀՀ պետական բյուջե ության, ինտենսիվ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի

իրականացում մշակաբույսերի սերմնաբուծության զարգացմանն աջակցություն» ծրագրի շրջանակներում 2019 թվականին մարզում փաստացի իրացվել է 33.705 տ գարնանացան գարու, 5.55 տ գարնանացան ցորենի, 55.949 տ կորնգանի, 0.35 տ եգիպտացորենի, 1.329 տ առվույտի, 0.42 տ ոլոռի և 0.05 տ սիսեռի սերմացուներ:

Կետ 112.2 - *Թռչնաբուծության զարգացման ծրագրի մշակում և իրականացում.*

Թռչնաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում 2019 թվականին մշակվել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել առաջարկություններ ՀՀ Շիրակի մարզում թռչնաբուծարան կառուցելու հնարավորությունների վերաբերյալ:

Կետ 113.1 - *Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում.*

2019թ. աշնանը ՀՀ Շիրակի մարզին հատկացված մկնանման կրծողների դեմ պայքարի համար նախատեսված 376 լիտր «Բրոմադիալոն» տեսակի մկնասպան թունանյութը բաշխվել է մարզի թվով 26 բնակավայրի 4700 հա տարածքում միջոցառումներ իրականացնելու համար: Միջոցառումներն իրականացվել են ամբողջությամբ: Հարավամերիկյան ցեցի հայտնաբերման նպատակով տեղադրվել է թվով 12 ֆերամոնային թակարդներ հետագա պայքարի միջոցառումները ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Կետ 113.2 - *Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի իրականացում.*

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի շրջանակներում 2019 թվականի ՀՀ Շիրակի մարզում իրականացվել է պատվաստում խոշոր եղջերավոր կենդանիների դաբաղ, էմկար, սիբիրախտ և հանգուցային մաշկաբորբ հիվանդությունների դեմ, իրականացվել է նաև պատվաստում թռչունների կեղծ ժանտախտի և խոզերի դասական ժանտախտի դեմ:

Կետ 113.3 - *Դաբաղ հիվանդության շճահետազոտության միջոցառումների իրականացում.*

Դաբաղ հիվանդության շճահետազոտության միջոցառումներ 2019 թվականին ՀՀ Շիրակի մարզում չի իրականացվել:

Կետ 117.1 - *Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում.*

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից 2019 թվականին օգտվել են 696 շահառու, տրամադրված վարկերի կամ փոխհատուցման գումարը կազմել է 2 618 785 000 դրամ, տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է 108 518 851 դրամ:

Կետ 117.2 - *Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում.*

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից 2019 թվականին օգտվել են 3 շահառու, տրամադրված վարկերի կամ փոխհատուցման գումարը կազմել է 220 000 000 դրամ, տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է 5 460 935 դրամ:

Կետ 117.3 - *Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության մշակում.*

2019 թվականի մայիս ամսին մշակվել է ՀՀ Շիրակի մարզի գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը:

Կետ 166.1 - *Համընդհանուր ներառական հանրակրթության ներդնում, այդ թվում՝ հատուկ դպրոցների վերակազմակերպման միջոցով Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ հիմնադրելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ.*

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 29-ի «ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների h3 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» թիվ 1098-Ա որոշման «ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների h3 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանվել է «Շիրակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության: ՀՀ Շիրակի մարզպետի 2019 թվականի սեպտեմբերի 27-ի N 222 կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 3 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող գույքի, ինչպես նաև պարտավորությունների կազմի ճշտման գործընթացը, գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի N 630-Ա հրամանով և ՀՀ Շիրակի մարզպետի 2019 թվականի սեպտեմբերի 27-ի N 222 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովների կողմից ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ /օժանակ/ դպրոց» ՊՈԱԿ-ը ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությունից հանձնվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությանը: ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից ապահովվել է կազմակերպությունում

սովորող թվով 55 աշակերտների՝ հանրակրթական ծրագրով հետագա ուսումնառությունը: Վերակազմավորման արդյունքում լուծարվող ՊՈԱԿ-ի աշխատակիցները ապահովվել են աշխատանքով:

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 29-ի թիվ 1116-Ա «ՀՀ Շիրակի մարզի Արթիկի N 1 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» որոշման «ՀՀ Շիրակի մարզի Արթիկի N 1 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանվել է «Արթիկի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության: ՀՀ Շիրակի մարզպետի 2019 թվականի սեպտեմբերի 30-ի N 226 կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի N 1 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող գույքի, ինչպես նաև պարտավորությունների կազմի ճշտման գործընթացը, գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի N 630-Ա հրամանով և ՀՀ Շիրակի մարզպետի 2019 թվականի սեպտեմբերի 30-ի N 226 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովների կողմից ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի N 1 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությունից հանձնվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությանը: ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից ապահովվել է կազմակերպությունում սովորող թվով 47 աշակերտների՝ հանրակրթական ծրագրով հետագա ուսումնառությունը: Վերակազմավորման արդյունքում լուծարվող ՊՈԱԿ-ի աշխատակիցները ապահովվել են աշխատանքով:

Կետ 267.1 - *Միասնական երթուղային ցանցի օպտիմալ տարբերակի մշակում*

Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանց ստեղծելու նպատակով նախկին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հետ համատեղ մշակվել է ՀՀ Շիրակի մարզի նոր երթուղային ցանցը: Երթուղային ցանցում ընդգրկված են թվով 35 ավտոբուսային երթուղիներ, որոնք ներառում են մարզի բոլոր բնակավայրերը:

Կետ 267.2 - *Օպտիմալ երթուղային ցանցի փաստացի ուղևորահոսքի հաշվարկ:*

ՀՀ Շիրակի մարզպետի 16.09.2019թ. N 01/07745-2019 գրությամբ տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ՀՀ Շիրակի մարզի միջմարզային և ներմարզային երթուղիների փաստացի ուղևորահոսքի վերաբերյալ:

Կետ 360.1 - *Քաղաքաշինական ծրագրային տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում, 2017-2024 թվականների ծրագրի շրջանակներում՝ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում:*

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի թվով 17 բնակավայրերի ելակետային տվյալները հավաքագրվել և ներկայացվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտե: ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից առաջարկվել է Մարմաշենի միջնադարյան վանքի հարևանությամբ, Ախուրյան գետի ձախ ափին Մարմաշենի ձորում «Էկոտուրիզմ» բազայի ստեղծման, Մանթաշ գետի ջրհավաք ավազանում բնության հատուկ պահպանվող տարածքի՝ արգելավայրի հիմնման, Ջաջուռի լեռնանցքում բնության հատուկ պահպանվող տարածքի՝ արգելավայրի հիմնման և Ախուրյանի կիրճի հյուսիսային հատվածում «Ախուրյանի կիրճ» էկոտուրիստական կենտրոնի ստեղծման նախագծերը ընդգրկել համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման ծրագրում: Աշխատանքները շարունակական են:

Կետ 367.1 – «*Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքեր և շինությունների անձնագրավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ:*

Պարբերաբար թարմացվել են որոշման նախագծի մշակման համար հիմք հանդիսացող՝ մարզում առկա վթարային բազմաբնակարան, ինչպես նաև այլ նշանակության շենքերի վերաբերյալ ելակետային տվյալները և ըստ անհրաժեշտության ներկայացվել են համապատասխան շահագրգիռ գերատեսչություններ:

Կետ 369.1 - *Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագրի ավարտ*

ՀՀ կառավարության 08.08.2019թ. N:1024-Ն որոշման համաձայն՝ ՀՀ պետական բյուջեից հատկացված 75,301.8 հազ. դրամ միջոցների հաշվին ՀՀ Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում (Ախուրյան, Գետք, Քեթի և Հացիկ) երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և բնակապահովման ծրագրի շահառու ճանաչված թվով 15 ընտանիքների համար իրականացված բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում թվով 14 շահառուներից մեկը հրաժարվել է օգտվելու ԲԳՎ տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրից: Մնացած 13 ընտանիքները ստացել են վկայագրեր, որոնցից 10-ը ձեռք են բերել բնակարաններ: Իսկ թվով 1 ընտանիքի տրամադրվել է համապատասխան ֆինանսական աջակցություն՝ կիսակառույց բնակելի տան շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով:

ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի N1610-Ն որոշման համաձայն՝ ՀՀ պետական բյուջեից հատկացված 535,587.0 հազ. դրամ միջոցների հաշվին արդեն իսկ մեկնարկել է ՀՀ Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում (Բասեն, Ջաջուռ, Կամո, Մայիսյան, Շիրակ, Գուսանագյուղ, Մարմաշեն, Ջրաձոր) ծրագրի շահառու ճանաչված թվով 90 ընտանիքների վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու նպատակով ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացը: Ծրագրի բոլոր շահառուներին ուղարկվել են ծանուցումներ: Ներկայումս հավաքագրվում են քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերը, որոնց հիման վրա մինչև 2020 թվականի փետրվարի 28-ը (ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի N1610-Ն որոշմամբ սահմանված ժամկետում) քաղաքացիներին կտրամադրվեն բնակարանի գնման վկայագրեր: ԲԳՎ տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի ավարտման ժամկետ է նախատեսված մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը:

Կետ 369.2 - *Ոչ հիմնական շինությունների քանդման և փարածքների ազատման, ինչպես նաև քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխանող շինությունների օրինականացմանն ուղղված մոտեցումների սահմանում*

Հավաքագրվել և ճշգրտվել են ՀՀ կառավարության 29.03.2018թ. N:361 և ՀՀ վարչապետի 20.12.2018թ. N:1658-Ա որոշումների համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի քաղաքային և գյուղական համայնքների ղեկավարների կողմից իրականացված բնակավայրերում պետական, համայնքային և այլ անձանց սեփականությունը հանդիսացող տարածքներում տեղակայված ոչ հիմնական շինությունների փաստագրման արդյունքները (գրաֆիկական և աղյուսակային նյութերը), որոնք տրամադրվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտեին:

Թվով 3545 ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբերյալ կազմված ցուցակներն ուղարկվել են ՀՀ ոստիկանություն և ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե՝ քաղաքացիների մշտական բնակության մասին, ինչպես նաև բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ տեղեկատվություններ ստանալու համար:

ՀՀ ոստիկանությունից և ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեից պարբերաբար տրամադրված տեղեկատվություններն ուղարկվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ ՀՀ վարչապետի 20.12.2018թ. N1658-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի քննարկմանը քննարկմանը: